



«ԱՐԳԻՆԱ»
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Տեսադաշտում՝ Ներառական կրթությունն ու
համայնքահեն ցերեկային արտադպրոցական ծառայություն
տրամադրող կենտրոնների գործունեությունը»

Մշտադիտարկման հաշվետվություն

2019թ.





«Գլոբսիս» ՍՊԸ

Փորձագիտական խմբի ղեկավար՝ Անի Գաբրիելյան

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 17/23ա

Հեռ. + 374 (0) 99 22 33 07

Էլ. Հասցե՝ globsys@fulllife.am

Սույն հետազոտությունը իրականացվել և մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ենթադրամաշնորհի հանդիսացող ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Արգինա» մշակութային հասարակական կազմակերպության և «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ-ների կոնսորցիումը: ֆինանսավորմամբ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է Իրավաբանների հայկական ասոցիացիան: «Մենք լիիրավ անդամ ենք» ծրագրի ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու են <<Արգինա>> մշակութային և <<Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների>> ՀԿ-ները և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության կարծիքը:

Սույն հետազոտությունը կատարվել է «Գլոբսիս» ՍՊԸ-ի կողմից՝ «Արգինա» ՀԿ-ի պատվերով:



Բովանդակություն

1. Հապավումներ _____	4
2. Ներածություն _____	5
3. Մեթոդաբանություն _____	6
4. Ֆիզիկական մատչելիության դիտարկման արդյունքների ամփոփում _____	8
5. Հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումը ծնողների դիտակետից _____	11
6. Դեպի համընդհանուր ներառականություն խորքային հարցազրույցներ _____	16
7. Եզրակացություն _____	20
8. Առաջարկություններ _____	21
9. Հարցաթերթիկներ _____	22
10. Ֆիզիկական մատչելիության դիտարկման քարտ _____	27



Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ԿԳՆ՝ Կրթության և գիտության նախարարություն

ՆԴ՝ Ներառական դպրոց

ՀԿ՝ Հասարակական կազմակերպություն

ՀՈԻԱ՝ Հաշմանդամություն ունեցող անձ

ՀՈԻԵ՝ Հաշմանդամություն ունեցող երեխա

ԿԱԿՈԻԵ՝ Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխա

ԱՈԻՊ՝ Անհատական ուսումնական պլան

ՄՀԱԿ՝ Մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոն

ՑԱԾԻԿ՝ Ցերեկային արտադպրոցական ծառայություն իրականացնող/ցերեկային կենտրոն

ԱՀԿ ՖՄԴ՝ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Ֆունկցիոնալության միջազգային դասակարգման



Ներածություն

2018թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազայում (հաշմանդամության վարչական ռեգիստրում) ընդգրկված է 188,051 հաշմանդամություն ունեցող անձ, որի 8,205-ը մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխա: Լոռու մարզում հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 726 է: Նրանց մեծ մասը մինչև համընդհանուր ներառական կրթության անցնելը կրթություն ստանում էին «Հատուկ գիշերօթիկ» դպրոցներում: Գիշերօթիկ դպրոցների փակումից հետո երեխաները տեղափոխվեցին իրենց ընտանիքներ և շարունակեցին կրթությունը համայնքի դպրոցներում: Իսկ գիշերօթիկները վերակազմակերպվել են և նրանցից շատերը տալիս են մանկավարժահոգեբանական աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին (այսուհետ՝ ՀՈՒԵ), նախ և առաջ իրականացնելով ՀՈՒԵ կրթական կարիքների գնահատում :

Քանի որ գործընթացը նոր է և կան բազմաթիվ խնդիրներ, ուստի «Արգինա» ՀԿ-ն իր «Մենք լիիրավ անդամ ենք» ծրագրի շրջանակներում մշտադիտարկման միջոցով փորձել է պարզել Լոռու մարզում գործող համայնքային աջակցության կենտրոնների գործունեության արդյունավետությունը, վեր հանել հիմնախնդիրները և մշակել առաջարկություններ՝ ուշադրության կենտրոնում ունենալով այդ կենտրոնների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիությունն ու հասցեականությունը:

Ներկայացվող հաշվետվության մեջ վեր են հանվել մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների (այսուհետ՝ ՄՀԱԿ) և ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող կենտրոնների (այսուհետ՝ ՑԱՕԻԿ կամ ցերեկային կենտրոն) ֆիզիկական մատչելիությանը վերաբերող հարցեր, գործունեության ընթացքում առաջացած խնդիրներն ու հնարավորությունները: Հաշվետվությունն ամփոփվում է առաջարկություններով:



Մեթոդաբանություն

Մշտադիտարկման նպատակն է՝ ուսումնասիրել Լոռու մարզում գործող համայնքային աջակցության կենտրոնների գործունեությունը, վեր հանել հիմնախնդիրները և մշակել առաջարկություններ՝ ուշադրության կենտրոնում ունենալով այդ կենտրոնների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիությունն ու հասցեականությունը:

Նշված նպատակին հասնելու համար սահմանվել էին հետևյալ խնդիրները.

- Ձևավորել և վերապատրաստել 2 հոգանոց մոնիտորինգային 2 խմբեր, որոնք մշտադիտարկում կիրականացնեն ընտրված համայնքային աջակցության կենտրոններում,
- Իրականացնել մշտադիտարկում Լոռու մարզի 3 քաղաքային համայնքների համայնքային աջակցության 6 կենտրոններում,
- Վերլուծել մշտադիտարկման արդյունքները և մշակել առաջարկություններ՝ բացահայտված խնդիրները հասցեագրելու համար,
- Ներկայացնել առաջարկությունների փաթեթ ոլորտի պատասխանատուներին:

Ընտրանք

Լոռու մարզում գործում են մանկավարժահոգեբանական աջակցության թվով 4 կենտրոններ և ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող թվով 5 կենտրոններ, որոնք ծառայություն են մատուցում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Մշտադիտարկման համար ընտրվել են մանկավարժահոգեբանական աջակցության թվով 3 կենտրոններ և ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող թվով 3 կենտրոններ, որոնց գործունեությունն իրականացվում է հասարակական կազմակերպությունների կողմից:

Ընտրությունը կատարելիս հաշվի է առնվել, որ տվյալ կառույցները գործում են մեծ քաղաքային համայնքներում, սպասարկում են մեծ թվով հաշմանդամություն ունեցող երեխաների և տվյալ բնակավայրից բացի, սպասարկում են նաև հարակից բնակավայրերի ՀՈՒԵ:

Ընտրված կառույցներն են՝

- Վանաձորի մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն,
- Ստեփանավանի մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն,
- Ալավերդու մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն,
- «Առավոտ» հասարակական կազմակերպություն /Վանաձոր/,
- «Փոքրիկ իշխան» համայնքահեն ցերեկային աջակցության կենտրոն /Վանաձոր/,
- «Լիարժեք կյանք» ՀԿ-ի «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոն» / Ստեփանավան/

Մեթոդներ՝

Մոնիտորների և ծրագրի աշխատակազմի կողմից իրականացվող ուսումնասիրությունների և հետազոտությունների համար որպես մեթոդաբանություն ընտրվել է առաջնային տեղեկատվության հավաքագրման սոցիոլոգիական հիմնական մեթոդների կիրառումը՝ հարցազրույց, ֆոկլուս խմբային քննարկում և դիտարկում.

- Խորին հարցազրույցներ և առանցքային տեղեկատուների հարցազրույցներ համայնքային աջակցության կենտրոնների 12 ներկայացուցիչների հետ (ղեկավարներ և



բազմամասնագիտական թիմի անդամներ),

- Ֆոկուս-խմբային 2 քննարկումներ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների մասնակցությամբ,
- Դիտարկում 6 կենտրոններում:

Դիտարկման մեթոդը կիրառվել է հետազոտության ընտրանքում ներառված համայնքային աջակցության 6 կենտրոններում, որը թույլ է տվել բացահայտել համապատասխանությունը մատչելիության շինարարական նորմերին: Օբյեկտի մասին համադրելի և կազմակերպված քանակական տվյալներ ստանալու նպատակով կիրառվել է ձևայնացված դիտարկման քարտ:

Մոնիտորների ընտրության սկզբունքները

Մոնիտորների ընտրությունը կատարելիս պարտադիր հիմք է ընդունվել երկու հիմնական չափանիշ՝ հասարակական ակտիվություն և փորձառություն:

Յուրաքանչյուր համայնքում դիտարկումներն ու հարցազրույցները իրականացրել են 5 հոգուց կազմված թիմերը, որոնցում ընդգրկվել են 1 համակարգող-մոնիտոր և 4 մոնիտոր: Յուրաքանչյուր համայնքում մոնիտորների աշխատանքային գրաֆիկն ու դաշտային աշխատանքը կազմակերպվել է համակարգող-մոնիտորի և մոնիտորների միջև փոխհամաձայնությամբ՝ ըստ նպատակահարմարության:

Տվյալների վերլուծության մեթոդները

Դիտարկումների արդյունքում հավաքագրված տվյալները ենթարկվել են քանակական վերլուծության: Տվյալների մուտքագրման, մշակման, պահպանման և վերլուծության համար կիրառվել է SPSS համակարգչային վերլուծական ծրագիրը:


Ֆոկուս խմբային քննարկումների և հարցազրույցների արդյունքներում հավաքագրված տեղեկատվությունը ենթարկվել է բովանդակային վերլուծության, որի արդյունքում ստացվել է ուսումնասիրվող խնդրի որակական կողմը՝ առավել խորքային և համապարփակ պատկերմամբ:



Ֆիզիկական մատչելիության դիտարկման արդյունքների ամփոփում


Մշտադիտարկման է ենթարկվել հաստատությունների հիմնական մուտքը՝ սկսած դարպասից: Սակայն ոչ բոլոր հաստատությունների հիմնական մուտքի մոտ են եղել դարպասներ:

Գծապատկեր 1. Հաստատություններ (%)



Հիմնական մուտքի պատկերը

Գծապատկեր 2. Հիմնական մուտք (%)



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, հաստատությունների 80 %-ի հիմնական մուտքերի մոտ առկա է թեքահարթակ: Այդ թեքահարթակների 90 %-ը եղել են առանց շեմի, առանց բռնաձողի, առանց ծածկի և միայն 10 %-ն է ունեցել շեմ, ծածկ և բռնաձող:

Հիմնականում բոլոր դարպասների մոտ բացակայում է հաստատության մասին տեղեկատվական վահանակի տեսանելիությունը, այն հիմնականում փակցրած է հաստատության մուտքի դռան մոտ:


Մի կարևոր դիտարկում. մանկավարժահոգեբանական կենտրոնները գտնվում են այնպիսի վայրերում, որտեղ որևէ երթուղային տրանսպորտ չի աշխատում: Միայն ավտոմեքենայի առկայության դեպքում է հնարավոր



հաշմանդամություն ունեցող երեխաներին տեղափոխել կենտրոններ, ինչը դժվարացնում է հաճախելիությունը հաստատություն:

Հաստատության մուտք


Գծապատկեր 3. Մուտք (%)



Մուտքի մոտ առկա թեքահարթակների միայն 1-ն է, որ միննույն ժամանակ ունի բռնաձող և ծածկ: Հաստատությունների միայն 20%-ն ունի այլընտրանքային մուտքեր, որոնք հիմնականում ծառայողական են, նախատեսված բեռների փոխադրման և սայլակ տեղափոխելու համար:

Իրավիճակը հաստատության ներսում

Գծապատկեր 4. Շենքի հարկերը (%)




Հաստատությունների 20 %-ում առաջին հարկի տարածքում առկա են աստիճաններ՝ 2-ից 4 հատ, առանց թեքահարթակի, որոնք այցելուի համար նշանակություն ունեցող սենյակի մուտքի ճանապարհին է եղել:




Միջանցքները 90 %-ի մոտ մատչելի են եղել, իսկ 10 %-ի մոտ մատչելի են եղել մասամբ:
 Երկհարկանի շենքերում տեղակայված հաստատություններում բացակայում է վերելակը:

Մենյակների և սանհանգույցի մուտքի դռներ

Գծապատկեր 5. Դռների լայնությունը (%)



Հաստատությունների դռները կարևոր նշանակություն ունեն հատկապես սայլակով մուտք գործելու համար և միայն 50 %-ի դեպքում է դրանց լայնությունը բավարար մատչելի մուտքի և ելքի համար:



Բոլոր հաստատություններում սանհանգույցներն առկա են, սակայն դրանց միայն 20 %-ն է մատչելի ՀՈՒԱ համար:

Մշտադիտարկման ենթարկված կառույցների ներկայացուցիչները առհասարակ պատկերացում և տեղեկատվություն չունեն դռների բացվածքներից, սանդուղքներից, թեքահարթակներից առաջ



նախագրուշացնող ակոսավոր կամ հակադրական գույներով ներկված մակերևույթի վերաբերյալ:

Հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումը ծնողների տեսանկյունից

Ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցել են միայն հաշմանդամություն ունեցող այն երեխաների ծնողները, որոնք գնահատված են մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնների մասնագետների կողմից և հաճախում են հանրակրթական դպրոց, ստանում են ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող կենտրոնների ծառայություններ:

Ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած ծնողների կարծիքով հաշմանդամություն ունեցող երեխան որևէ հաստատություն ընդունվելու համար առաջնահերթ պետք է ստանա մանկավարժահոգեբանական կենտրոնի գնահատումը, որից հետո միայն կարող է կազմակերպվել նրա ուսուցումը կրթական կենտրոններում: Այդ պատճառով էլ նրանք առաջինը խոսեցին մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետների հետ աշխատանքից:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (Այսուհետ ԿԱՊԿ) գնահատումը կատարվում է մանկավարժահոգեբանական աջակցման տարածքային կենտրոնների կողմից: Ծնողների շրջանում գոյություն ունի թերի տեղեկացվածություն կրթական կարիքների գնահատման գործընթացի էության և դրա նպատակների վերաբերյալ: Ըստ նրանց, գնահատման փաստաթուղթը պահանջ է դպրոցի կողմից, դրա համար այն ձեռք են բերում՝ ընդհանրապես պատկերացում չունենալով այդ գործընթացի կարևորության մասին:

Թեև գործընթացի նպատակը ծնողների մի մասը չի ընկալել, սա ամենևին չի նշանակում, որ գնահատումն ընդհանրապես տեղի չի ունեցել: Պարզապես ո՛չ դպրոցի, ո՛չ էլ գնահատման կենտրոնի մասնագետները ծնողներին պատշաճ կերպով չեն բացատրել կարիքների գնահատման էությունը: Ծնողները նշում էին, որ եկել են ինչ-որ մարդիկ և երեխայի հետ զրուցել են, գույներ են ցույց տվել, հարցեր են տվել, ու վերջում եզրակացրել են, որ երեխան կարող է գնալ կամ շարունակել գնալ դպրոց:

Ինչպես փաստում է մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրենը, երեխայի կրթական կարիքների գնահատումը կարող է տևել մեկ օրից մինչև 2 շաբաթ՝ կապված դեպքի բարդությունից և լրացուցիչ մասնագետներ ներգրավվելու անհրաժեշտությունից: Կոնկրետ տվյալ հետազոտության մեջ ներառված դեպքերի գերակշիռ մեծամասնությունում գնահատումը տևել է մեկից երկու օր: Այն դեպքերում, երբ ծնողը հետամուտ է եղել իր երեխայի կրթական կարիքների գնահատմանը, առանձնացվում է գործընթացի հետ կապված երկու հիմնական դժգոհություն: Որոշ ծնողների հավաստմամբ 1-2 օրում անհնար է ճշգրիտ պատկերացում կազմել երեխայի կարիքների մասին: Անհրաժեշտ է տևական ժամանակ և այցելություններ դպրոցներ, քանի որ հավանական է, որ իր համար հարազատ միջավայրում երեխան ավելի անկաշկանդ վարք կցուցաբերի և կպատասխանի այն հարցադրումներին, որոնց չի կարողացել պատասխանել օտար վայրում՝ անձանոթ մարդկանցով շրջապատված:

Բազմաթիվ ծնողների հավաստմամբ ցանկալի է, որ երեխաների կրթական կարիքները վերագնահատվեն առավել հաճախ, օրինակ՝ տարին մեկ անգամ ներկայիս երկու տարին մեկ հաճախականության փոխարեն:

Ծնողների մի մասը պնդում է, որ կասկածանքով են վերաբերվում մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից կիրառվող գնահատման մեթոդներին, որոնք նրանց կողմից ընկալվում են որպես պարզունակ: Այդուհանդերձ, ծնողների գերակշիռ մեծամասնությունը համոզված է, որ հենց մանկավարժահոգեբանական կենտրոնն է տալիս վերջնական եզրակացություն՝ երեխային

ներառելու կամ չներառելու վերաբերյալ:
Ի՞նչ մասնագետներ են իրականացրել



գնահատումը, ինչպե՞ս կգնահատեք այդ մասնագետների աշխատանքը հարցին ի պատասխան մասնակից ծնողները նշեցին, որ հետևողական չեն եղել այդ գործընթացին, միայն բավարարվել են այն տեղեկատվությամբ, որ հիմնական անհրաժեշտ մասնագետը այդտեղ է եղել, մնացած մասնագետներով չեն հետաքրքրվել:

«Ինձ պետք էր լոգոպեդի եզրակացությունը, ուղիղ գնացել եմ լոգոպեդի մոտ: Մնացած մասնագետների մասով չեմ էլ տեղեկացել»:

Ստեփանավանի տարածաշրջան, ֆոկլուս Խմբային քննարկմանը մասնակցած ծնող

Ներառական կրթության վերաբերյալ ծնողները շարունակում են թերի տեղեկացված մնալ ներառական կրթության (Այսուհետ ՆԿ) էության և հիմնական նպատակների մասին: ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների մի մասը ևս սխալ պատկերացում ունի ՆԿ նպատակների մասին: Ծնողների մի մասը հակված են ՆԿ նույնացնել երեխաների համար շփման, «տնից դուրս գալու» հնարավորությունների հետ, մյուս մասի համար էլ ՆԿ հավասարագոր է երկարօրյա կրթությանը:

ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները չեն տիրապետում իրենց երեխաների իրավունքների պաշտպանության որևէ մեխանիզմների: Երբ նրանց իրավունքները ոտնահարվում են, ծնողների կողմից կատարվող միակ քայլը խնդրելն է տնօրենին կամ ուսուցչին, որպեսզի նա դասարանի երեխաներին «հեռու պահի» իրենց երեխայից: Արդյունքում, մի շարք դպրոցներում հիմնական ուսուցիչները բոլոր աշակերտների ներկայությամբ շեշտում են ԿԱՊԿՈՒ երեխաների «յուրահատուկ կարգավիճակը»:

«Ես իմ երեխային այն ժամանակ եմ դպրոց տանում, երբ գիտեմ, որ մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնների մասնագետները պետք է այցելեն դպրոց և անհատական պարապմունքներ իրականացնեն իմ երեխայի հետ: Շաբաթական այդ երկու օրը իմ երեխային ավելի շատ բան է տալիս, քան դպրոց հաճախելը և ընդհանուրի հետ դասի նստելը»:

Ստեփանավանի տարածաշրջան, ֆոկլուս Խմբային քննարկմանը մասնակցած ծնող

Խնդիրը արդիական է, շատ ծնողներ են այդպես վարվում, երեխային դպրոց են տանում այն ժամանակ, երբ ՄՀԱԿ-ի մասնագետները պետք է այցելեն: Ծնողների կարծիքով, չպետք է փակվեին գիշերօթիկ դպրոցները, որոնք շատ ապահով միջավայր էին ՀՈՒ երեխաների համար, անհրաժեշտ աջակցությունը երեխաները տեղում ստանում էին: Այժմ երեխաները հանրակրթական դպրոցներում ամենաշատը 2 դասաժամի են մասնակցում՝ հիմնականում պարտադիր առարկաներից:

Ես՝ իմ երեխային շաբաթական 2-3 անգամ եմ տանում դպրոց, որպեսզի գոնե 9 ամյա կրթությունը ստանա, տանեմ մի արհեստի տամ սովորի: Տղաս շատ է սիրում երաժշտությունը, երաժշտական գործիքները:

Ստեփանավանի տարածաշրջան, ֆոկլուս Խմբային քննարկմանը մասնակցած ծնող

Ըստ վերոնշյալ ծնողի, դպրոցը չի ապահովում այն միջավայրը, որ երեխան կարողանա երաժշտության ուղղությամբ ստանալ կրթությունը, իսկ արվեստի դպրոցները չեն վերցնում երեխային նեղ մասնագետ (հաշմանդամություն ունեցողի հետ աշխատող) չունենալու պատճառով:

Բացի այդ երեխաների դասապրոցեսին մասնակցելը ձևական բնույթ է կրում, անունը դրված է ներառական կրթություն,



բայց ոչ ներառվում են, ոչ էլ կրթություն ստանում: Միակ բանը, որով ձգում է դպրոցը, դա մանկավարժաժողովրդական կենտրոնների մասնագետների անհատական պարապմունքներն են :

Այժմ անդրադառնանք գործնականում ԱՌԻՊ-երի կազմման և կիրառության առանձնահատկություններին: Ըստ ծնողների, իրենց երեխաները մյուսներից տարբերվում են իրենց խնդիրներով՝ հուզականային, վարքի շեղումներ, մտավոր խնդիրներ և այլն: Այդ խնդիրների պատճառով նրանք իրենց ճնշված են զգում, շատ ու շատ բաներից զրկված են, հասարակության կողմից արժանանում են վատ վերաբերմունքի: Այդ ամենի մասին միայն իրենք՝ ծնողներն ունեն տեղեկատվություն, բացի այդ միայն իրենք գիտեն իրենց երեխաների մտավոր ունակությունների, զարգացման հապաղման մասին: Ըստ նրանց, մասնագետը կարող է գնահատել երեխայի ընդհանուր գիտելիքները, իսկ ընդունակությունների ու հնարավորությունների մասին կարող է միայն ծնողը ասել: Բայց դպրոցներում անհատական ուսումնական պլանի մշակման ընթացքում չկա ուսուցիչ-ծնող համագործակցության կապը:

Ես միշտ բարձրաձայնել եմ, որ ինքս ուզում եմ մասնակցել իմ երեխայի վերաբերյալ ԱՌԻՊ-ի մշակման գործընթացին: Բայց ոնց ասել եմ, այդպես էլ խոսքս մնացել է օդից կախված :

Վանաձորի տարածաշրջան, ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած ծնող

«Մենք գիտենք, որ մշակվում է ամեն երեխայի համար հատուկ Անհատական ուսումնական պլան (ԱՌԻՊ), որն ուղեցույց է երեխաների հետ աշխատող մասնագետների և ծնողների համար» - մատնանշում են ծնողներից շատերը և հավելում, որ այն օգնում է հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒԵ անհատական ուսուցման արդյունավետ կազմակերպմանը և դրանով իսկ երեխաների կրթական, սոցիալական և այլ հատուկ կարիքների բավարարմանը: ԱՌԻՊ-ի նպատակն այն է, որ երեխան ձեռք բերի հիմնական հմտություններ, որոնք օգնում են երեխային դառնալ ինքնուրույն և ինքնավստահ: Այդ նպատակին հասնելու համար ծնողը մեծ դեր ու նշանակություն ունի, սակայն ծնողն առհասարակ չի մասնակցում այդ գործընթացին: Ըստ ֆոկուս խմբային քննարկման մասնակիցներից շատերի, խնդիրը միայն ուսուցիչներից չի գալիս, նաև ծնողները լավ տեղեկացված չեն ԱՌԻՊ-ի մասին, չգիտեն այդ գործընթացում ինչպես կարող են մասնակցել և ինչ անել:

Մեզ միայն տեղեկացնում են, որ գոյություն ունի ԱՌԻՊ, որի գոյության դեպքում միայն կարող ենք ճիշտ և մատչելի աշխատել երեխաների հետ, իսկ մենք որպես ծնող ինչպե՞ս ենք ներգրավված լինելու այդ գործընթացում՝ չգիտենք:

Վանաձորի տարածաշրջան, ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցած ծնող

Եթե դպրոցը, երեխայի ծնողը ցանկանում են որակյալ արդյունք ստանալ և ներառական կրթությունը հասնի իր նպատակին, ապա դրա համար կարևոր բաղադրիչ է ծնող - երեխա - մանկավարժ կապը: Ուսուցիչը, ինչու չէ, նաև ծնողը, պետք է պարբերաբար տեղեկություն հաղորդեն երեխայի վարքի փոփոխության մասին: Ըստ մասնակիցների, կրթությունը ավելի արդյունավետ կլինի, եթե ծնողն ունենա իր աջակցությունն այս գործում:

Քանի որ երեխան օրվա մեծ մասն անցկացնում է ծնողի մոտ, ուստի անհրաժեշտ է, որ նա մասնագետների գործը շարունակի տանը: Ես պատկերացնում եմ ինձ այդ դերում, որ մասնակցում եմ ԱՌԻՊ-ի կազմման և գնահատման գործընթացին, և ընկալում, որ ինչքան արդյունքների կարող է հասնել իմ երեխան: Օրինակ՝ մեր դպրոցում կան

| ծնողներ, որոնք ամաչում են երեխային բերել



ներառական դպրոց և դա, անշուշտ, բացասաբար է անդրադառնում և՛ այդ երեխայի, և՛ մյուս երեխաների վրա: Ու իր այդ վիճակի պատճառով երեխան տնային ուսուցում է անցնում:

Վանաձորի տարածաշրջան, ֆոկլուս խմբային քննարկմանը մասնակցած ծնող

Ծնողներից շատերը նշեցին, որ իրենց երեխաների հետ հիմնականում աշխատում են ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը, լոգոպեդը և հոգեբանը: Ըստ նրանց, բացի ուսուցչի օգնականից, այլ ծառայությունները հիմնականում ստանում են մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակիցների կողմից:

Հետազոտության բոլոր մասնակիցները շատ բարձր են գնահատել հաշմանդամություն ունեցող երեխաների համար գործող ցերեկային կենտրոնների գործունեությունը: Կենտրոնում տրամադրվող մասնագիտական օգնությունը բավականին մեծ ազդեցություն է ունենում երեխաների սոցիալական, հոգեբանական խնդիրների հաղթահարման գործում:

«Տղաս շատ ակտիվ երեխա է, հարևան երեխաները, դասընկերները խուսափում են իր հետ շփվել, ինքն էլ մեկուսանում է, երեխաները չեն խաղում իր հետ ու ինքը շատ է նեղվում դրանից: Դրա համար շատ ուրախ եմ, որ գալիս է «Փոքրիկ իշխան» ցերեկային կենտրոն և շփվում մյուս երեխաների հետ: Շատ լավ կլիներ, որ երեխաները կենտրոն հաճախեին ամեն օր:

Վանաձորի տարածաշրջան, ֆոկլուս խմբային քննարկմանը մասնակցած ծնող

Ծնողները գոհունակությամբ խոսեցին ցերեկային կենտրոնների մասին, քանի որ մեծամասամբ երեխաներն ուրիշ ոչ մի տեղ չեն գնում: Ցերեկային կենտրոնները միակ վայրն են, ուր երեխաներն այցելում են, միակն են նաև ծնողների համար, որոնք երեխաներին կենտրոն տանելով՝ իրենց առօրյա գործերով զբաղվելու հնարավորություն ունեն: Կենտրոնները միակ վայրն են, որտեղ երեխաների մոտ բավականին մեծ առաջընթաց են գրանցում, ու դա միայն կենտրոն հաճախելու շնորհիվ: Ծնողները գտնում են, որ եթե կենտրոնները հնարավորություն ունենան իրենց ծառայություններն ավելացնելու, ապա երեխաներն ավելի լավ կզգան և ավելի շատ արդյունքներ կգրանցեն: Լոռու մարզի ցերեկային կենտրոններում առհասարակ չկա ֆիզիոթերապիայի ծառայություն, ինչն անհրաժեշտ է բոլոր այցելող երեխաներին: Ըստ ծնողների, լոգոպեդի ժամերն էլ պետք է ավելացնել, համապատասխան սարքավորումներով հագեցնել ցերեկային կենտրոնը, որը հնարավորություն կունենա մատուցել ֆիզիոթերապիայի, լոգոպեդի, արտթերապիստի, հատուկ մանկավարժի, հոգեբանի և մասնագիտական ուսուցման այլ ծառայություններ: Մարզի որևէ կենտրոն հագեցած չէ մարզասարքերով, մարզական-վերականգնողական և մասնագիտական ուսուցման սարքավորումներով: Ցերեկային աջակցություն իրականացնող կենտրոնները, ըստ ծնողների, պետք է ծառայություն մատուցեն ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաներին, այլ նաև սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին, ովքեր իրենց երեխաների հետ կմարզվեն, կշփվեն, նրանց հետ նաև կպատրաստեն դասերը: Քննարկմանը մասնակցած ծնողներից շատերը նշեցին, որ Կենտրոնի միջոցով պետք է լուծվեն մի շարք խնդիրներ, այն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց դարձնել հասարակության լիիրավ անդամ, նպաստել նրանց շրջապատ մտնելուն, ընկերներ գտնել, ինչպես նաև թեթևացնել խնդիրներ ունեցողների ծնողների հոգսերը, տալ նրանց լրացուցիչ գիտելիքներ ու հմտություններ: Իսկ այս ամենին կարելի է հասնել միայն ինտեգրված կենտրոն ունենալու պարագայում:



Դեպի համընդհանուր ներառականություն

Խորին հարցազրույցներն անց են կացվել Լոռու մարզի Վանաձորի, Ստեփանավանի և Այավերդու հոգեբանամանկավարժական աջակցության կենտրոնների և ցերեկային արտադպրոցական ծառայություններ իրականացնող կենտրոնների ղեկավարների հետ:

Հարցազրույցների մասնակիցները մատնանշեցին այն հանգամանքը, որ 2012թ.-ին ՀՀ ԿԳՆ հանդես եկավ մի նախաձեռնությամբ, որի համաձայն այլևս գոյություն չեն ունենալու ներառական դպրոցներ (Այսուհետ՝ ՆԴ) և ոչ ՆԴ-ներ, այլ խոսքը գնալու է համընդհանուր ներառականության մասին՝ այսինքն՝ ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցներն ինքնըստինքյան մինչև 2022թ. պետք է դառնան ներառական և ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցները պետք է իրենց դռները բացեն ԿԱՊԿՈՒ երեխաների առջև: Ըստ նրանց, այս նախաձեռնությունը բավականին ռիսկային է: Պետք է ճշգրիտ հաշվարկված լինեն պետական բյուջետային ներդրումները և ըստ այդմ՝ ՆԴ-երի ավելացման դինամիկան: Այսօր չենք կարող ասել, թե ինչպիսին է լինելու մինչև 2022թ. ՆԴ-երի թվի ավելացման դինամիկան, որքանով է պետական բյուջեն «ունակ» իրեն թույլ տալու ունենալ 1400-ից ավելի ՆԴ, և ամենակարևորը՝ ներկայումս ֆինանսավորման ճշգրիտ մեխանիզմ գոյություն չունի, մենք չգիտենք ներկայումս գործող պիլոտային ֆինանսավորման մեխանիզմը կգործի, թե՞ կմշակվի լիովին այլ ֆինանսավորման մեխանիզմ, այստեղ խնդիրները շատ են: Մինչև կայուն ֆինանսավորումը չլինի, չենք կարող ասել, որ ներառական կրթությունը կապահովվի դպրոցներում: Բացի այդ, ֆիզիկական հարմարվածության, նյութատեխնիկական և մեթոդական ռեսուրսների խնդիրներ ևս ունեն դպրոցները: Նախկինում ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքը, այսուհետև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը բավականին անորոշ ձևակերպում է տալիս ՆԴ-երի ֆիզիկական համարեցվածության չափանիշներին. խոսքը գնում է անհրաժեշտ տարածքների/ենթակառուցվածքների մասին, որոնց բովանդակային կողմը չի նշվում: Մենք առաջին հայացքից տեսնում ենք դպրոցի դռան մոտ թեքահարթակ և համարում ենք, որ դպրոցը դրանով մատչելի է: Բայց դպրոցներից որևէ մեկը չունի շենքի ներքին քաղաքաշինական մատչելիություն: Սանհանգույցներն առհասարակ հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին, շատ դպրոցներում դեռևս տիպային սանհանգույցներ են և գտնվում են անմխիթար վիճակում: Որևէ դպրոց չունի հարմարեցված սպորտային դահլիճ, առավել ևս մասնագետ-ուսուցիչ, ով կարող է պարապել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ: Առանձնահատուկ դասասենյակային հարմարեցվածությամբ ևս որևէ դպրոց աչքի չի ընկնում: Մա բավականին ծախսատար խնդիր է, որն այսօր որևէ դպրոց սեփական միջոցներով չի կարող լուծել: Ինչ վերաբերում է ՆԴ-երի նյութատեխնիկական բազային, ապա այն, ըստ մասնագետների համարվում է մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աջակցությամբ, կենտրոնները դպրոցներին տրամադրում են մեթոդաբանական ձեռնարկներ, խորհրդատվություն են տալիս ուսուցիչներին, սեմինարներ են կազմակերպում նրանց համար: Որպեսզի արդյունավետ լինի ԿԱՊԿՈՒ-Ե կրթությունը դպրոցում, ըստ հարցազրույցի մասնակիցների, նրանց հետ պետք է աշխատեն բազմամասնագիտական թիմեր: Մակայն գոյություն չունի ընդհանուր մոտեցում բազմամասնագիտական թիմի պարտադիր կազմի և անդամների գործառույթների վերաբերյալ: ՀՀ կրթության պետական ծրագիրը սահմանում է, որ թիմում պետք է ներգրավված լինեն երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ հոգեբան, լոգոպեդ) և թիմի համակարգողը: Մասնագետի աշխատանքի նկարագրությունը կամ առնվազն պարտականությունների սահմանը չի նկարագրվում: Նման կարգավորումների բացակայության արդյունքում թե՛ բազմամասնագիտական թիմի կազմը, թե՛ պարտավորությունների ընկալումը տարբերվում են: Ըստ նրանց ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները դժգոհում են, որ իրենց երեխաների հետ անհատական աշխատանք բավարար ժամաքանակով չի



տարվում՝ մասնագետների բացակայության հետևանքով:

Մենք նկատել ենք, որ ծնողները երեխաներին այն ժամանակ են բերում դպրոց, երբ մեր կենտրոնի աշխատակիցները այցելում են դպրոցներ: Նրանք ֆիքսված օրերը գիտեն, թե երբ են լինում տվյալ դպրոցում: Մեր կենտրոնի աշխատակիցները տարածաշրջանի այն դպրոցներում են լինում, որտեղ չկան այդ բազմամասնագիտական թիմերը: Պատկերացրեք, եթե տվյալ դպրոցում բազմամասնագիտական թիմերը գրագետ և ճիշտ չաշխատեն երեխաների հետ, կունենանք այն, որ կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող և ոչ մի երեխա չի այցելի դպրոց:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրեն

ՀՀ-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կատարվում է ՄՀԱԿ-ի կողմից: Ըստ մասնագետների, երեխաների ծնողների մոտ կա թերի տեղեկացվածություն կրթական կարիքների գնահատման գործընթացի էության և դրա նպատակների վերաբերյալ: Ո՛չ դպրոցի, ո՛չ էլ գնահատման կենտրոնի մասնագետները ծնողներին պատշաճ կերպով չեն բացատրել կարիքների գնահատման էությունը:

Մեր ցերեկային կենտրոն հաճախող երեխաների կարիքները մեր կողմից գնահատվում է ԱՀԿ ՖՄԴ վրա հիմնված ծառայությունների տրամադրման նպատակով մշակված գնահատման գործիքով, որը մշակել է մեր կազմակերպության փորձագիտական թիմի կողմից և այն ներկայումս կատարելագործվում է տարիքային առանձնահատկությունների և կարիքների գնահատման խորացման տեսանկյունից, Սակայն խնդիրը այն է, որ այս երեխաները թև արդեն իսկ գնահատված են լինում ՄՀԱԿ-ի բազմամասնագիտական թիմի կողմից, սակայն ծնողները այդ գնահատման արդյունքներից: Երբ ծնողներին հարցնում ենք, թե ինչ գիտեն իրենց երեխաների կարիքների, պահանջունքների և ընդունակությունների մասին, նրանց պատասխանները շատ կցկտուր են: Նրանք հաճախ նշում են, որ գլուխ չեն հանում մասնագիտական տերմիններից: Ի տարբերություն դրա ԱՀԿ ՖՄԴ-ի վրա հիմնված գործիքի, որը ապահովում է երեխայի կարիքների գնահատման ընդհանուր հասկանալի լեզու բոլորի համար:

Ստեփանավանի ցերեկային կենտրոնի համակարգող

Ըստ մասնագետների, գնահատման արդյունավետության համար անհրաժեշտ է ապահովել ՄՀԱԿ-ի համագործակցությունը ցերեկային արտադպրոցական ծառայություն իրականացնող այլ կառույցների հետ: Այսօր բացակայում է կապը այդ կենտրոնների մասնագետների միջև, մինչդեռ, եթե կայանա համագործակցությունը, ապա փորձի և տեղեկատվության փոխանակման արդյունքում կշահի միայն ԿԱՊԿՈՒ երեխան:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների տնօրենների հավաստմամբ ԱՌԻՊ-երի կազմման գործընթացում առկա է չորս առանցքային խնդիր: Ծնողների ճնշող մեծամասնությունը գաղափար անգամ չունի, թե ինչ է իրենից ներկայացնում ԱՌԻՊ-ը և որն է դրա նպատակը: Բնականաբար, ծնողները չեն մասնակցում ԱՌԻՊ-երի մշակմանը և պատկերացում չունեն, թե որքանով է իրենց երեխաների կրթության փաստացի կազմակերպումը բխում երեխաների՝ ԱՌԻՊ-ում ամրագրված կարիքներ

ից: ԱՌԻՊ-երի կազմման ընթացքում հանդիպող մյուս խնդիրը կապված է բազմամասնագիտական և առարկայական ուսուցիչների միջև թույլ համագործակցության հետ: Մասնավորապես խոսքը գնում է այն մասին, որ շատ դեպքերում առարկայական ուսուցիչները բավարար ուշադրություն չեն հատկացնում ԱՌԻՊ-ում նախատեսված իրենց բաժինները լրացնելուն՝ պատճառաբանելով, որ ԿԱՊԿՈՒ երեխաներով պետք է զբաղվի բազմամասնագիտական թիմը, այլ ոչ թե առարկայական ուսուցիչները: Երրորդ խնդիրը կայանում է նրանում, որ ԱՌԻՊ-երի վերանայման ընթացքում ամրագրվում է միայն երեխայի առաջընթաց ունենալու կամ չունենալու փաստը: Եթե որևէ առաջընթաց չի դիտարկվում, ապա վերջնանպատակը փոփոխվում է կամ մնում է նույնը: Բավարար ուշադրություն չի դարձվում այն գործոնների

վերլուծությանը, որոնք



կարող են հիմք հանդիսանալ առաջընթացի բացակայության և ըստ այդմ՝ մեթոդների և մոտեցումների մեջ փոփոխություններ կատարելու համար: Չորրորդ խնդիրն, այն է՝ որ, մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները չունեն որևէ իրավասություն ԱՌԴ-երի իրականացումը մոնիթորինգի ենթարկելու, ինչը կենտրոնի տնօրենի համոզմամբ ներառական կրթության կազմակերպման ամենաեական խնդիրներից է: Տնօրենի հավաստմամբ առարկայական ուսուցիչներից շատերը պատկերացում չունեն, թե ինչպես իջեցնեն հանրակրթական գիտելիքների շեմն այնքանով, որ տվյալ ԿԱՊԿՈՒ երեխան ձեռք բերի զարգացման իր մակարդակին համապատասխան գիտելիքներ: Այս խնդրով պետք է զբաղվեն բազմամասնագիտական թիմի անդամները, սակայն նրանց և առարկայական ուսուցիչների միջև համագործակցության բացակայության արդյունքում խնդիրը մնում է չհասցեագրված:

Հարցը կարող է լուծում ստանալ, եթե «գնահատողը» միևնույն ժամանակ հանդիսանա նաև «աջակցող և ուղղորդող» կողմ: Ինչ վերաբերում է ԱՌԴ-երի մոնիթորինգին, ապա դպրոցները չունեն այդպիսի մեխանիզմներ: Հաշվի առնելով ԱՌԴ-երի մշակմանը ծնողների մասնակցության բացակայությունը, ակնայտ է, որ նրանք որևէ կերպ չեն հետևում, թե որքանով է ուսումնական գործընթացը կազմակերպվում ԱՌԴ-ին համապատասխան: Գնահատման կենտրոնների կանոնադրության համաձայն՝ վերջիններս պատասխանատու են միայն կրթության առանձնահատուկ կարիքների գնահատման և ոչ թե վկայագրման կամ ուղղորդման համար:

Ինչ վերաբերում է ցերեկային կենտրոնների աշխատանքին, ըստ մասնագետների դրանք բարելավում են հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակը՝ հնարավորություն ընձեռելով հաշմանդամություն ունեցող երեխաներին ձեռք բերելու առօրյայում անհրաժեշտ բազմաթիվ տարրական գիտելիքներ: Նրանք գտնում են, որ գործող կենտրոնները հաշմանդամություն ունեցող շատ երեխաների համար դարձել է երազանք, քանի որ դրանք ծառայում են խիստ սահմանափակ թվով երեխաների: Թե ցերեկային կենտրոնների և թե՛ ՆԴ-ի ուշադրությունից դուրս են մնում ինքնասպասարկման լուրջ դժվարություններ չունեցող երեխաները, նրանք պարփակված են իրենց տներում, ստանում են ձևական տնային ուսուցում: Մինչդեռ կարելի է հզորացնել ցերեկային արտադպրոցական ծառայություն իրականացնող կենտրոններին և ՆԴ-ին ու այդ երեխաներին ուղղորդել կենտրոններ: Այնտեղ նրանց հետ կաշխատեն բազմամասնագիտական թիմերը, իսկ ծնողները կկարողանան գոնե 1-2 ժամ ազատ լինել այլ հոգսերով զբաղվելու համար: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է նաև ավելացնել մասնագետների հաստիքները և երեխաների հետ աշխատանքի ժամերը: Ի տարբերություն ՆԴ-ի, ցերեկային կենտրոններում մշտապես պահպանվում է կապը ծնողների միջև: Նրանց հետ ևս պարբերաբար անց են կացվում հանդիպումներ, քննարկումներ, մասնագետները ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքները, իսկ ծնողները անդրադառնում են երեխայի ձեռքբերումներին կամ խնդիրներին: Ցավոք, ցերեկային կենտրոններում ժամաքանակը քիչ է և երեխաները 1-2 ժամ հետո վերադառնում են տուն:

Ցերեկային կենտրոնները ևս չեն կարողանում աշխատել բարդ խնդիրներ ունեցող երեխաների հետ, քանի որ համապատասխան ֆինանսական և նյութական ռեսուրսներ ու նյութատեխնիկական բազա չունեն: Ըստ մասնագետների պետք է հնարավորություն տրվի ՑԱՕԻԿ -երին՝ ընդունելու բոլոր այն երեխաներին, որոնք ունեն դրա կարիքը:



Եզրակացություններ

Թեև Լոռու մարզը նախորդ ուսումնական տարվանից է անցում կատարել համընդհանուր ներառական կրթության և խնդիրներն այդ ոլորտում բազմազան են: Համընդհանուր ներառական կրթության ընթացքում նաև վերակազմակերպվեցին «Հատուկ գիշերօթիկ» դպրոցները, որոնց մի մասն այսօր մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ են: Վերակազմակերպված գիշերօթիկ դպրոցների երեխաները ուղղորդվեցին հանրակրթական դպրոցներ: Մեր կողմից կատարված հետազոտություններից պարզ դարձավ, որ այսօր այդ երեխաները դպրոց հիմնականում այցելում են այն օրերին, երբ մասնագետների խումբը այցելում է իրենց դպրոցներ: Իսկ այն դպրոցները, որոնք արդեն իսկ ունեն բազմամասնագիտական թիմեր, այդ դպրոցների երեխաներից մեծ մասը տնային կրթություն է ստանում:

Ըստ հետազոտության վերլուծության, համընդհանուր կրթության անցած Լոռու մարզի դպրոցները գործում են ոչ թե ներառական կրթություն իրականացնելով, այլ փորձում են դեռևս ԿԱՊԿՈՒԵ ինտեգրել միջավայրին: Հատկանշական է, որ ԿԱՊԿՈՒԵ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում՝ սկսած ԱՌԻՊ-ից մինչև դասապրոցես: Կրթության որակ հասկացությունը որևէ կերպ չի առնչվում ներառական կրթության հետ: Այս ամենի հետ հետզհետե ավելանում են տնային ուսուցման ձգտող ծնողների քանակը:

Ներառական կրթության կազմակերպման գործընթացում որոշ դեպքերում մեծ խնդիր է առաջացնում հիպերակտիվ կամ վարքային խնդիրներ ունեցող երեխաներին 45 րոպե շարունակ մասնակից դարձնելը դասապրոցեսին: Նման դեպքերում 45 րոպե հարկադրաբար նստարանին նստած պահելը խոշտանգում է վերածվում տվյալ երեխայի հանդեպ, բացի դրանից կարող է տուժել ամբողջ դասապրոցեսը: Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ այս հարցում ևս չկա ճկունություն և անձնակենտրոն մոտեցում:

Մյուս կողմից ներառական կրթության իրականացման ընթացքում գոյություն չունի մասնագիտական թիմի նկատմամբ ընդհանուր մոտեցում: Սա չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ կրթության որակի ապահովման վրա: Բազմամասնագիտական թիմի անդամները հստակ պատկերացում չունեն իրենց պարտականությունների մասին: Իսկ առարկայական ուսուցիչները անտարբեր են ՆԿ նկատմամբ և բավարար ժամանակ չեն տրամադրում ԿԱՊԿՈՒ երեխայի հետ աշխատանքին: Բազմամասնագիտական թիմ-մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն-առարկայական ուսուցիչներ և ԿԱՊԿՈՒ ծնողներ համագործակցությունը կամ շատ թույլ է կամ ի սպառ բացակայում է: Ծնողները չեն մասնակցում ԱՌԻՊ-ների կազմմանը:

Բազմամասնագիտական թիմերը, մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները պետք է սերտորեն համագործակցեն յուրաքանչյուր այն կենտրոնի հետ, որտեղ իրենց դպրոցների ԿԱՊԿՈՒ երեխաները ստանում են ցերեկային արտադպրոցական ծառայություն: Քանի որ, ըստ երեխաների ծնողների, այդ կենտրոններում իրականացված աշխատանքի շնորհիվ է երեխայի

մոտ

առաջընթաց

նկատվում:

Բացի




այդ, փոխհամագործակցությունը կարևոր է նաև այն առումով, որ երեխայի կարիքները գնահատվում է յուրաքանչյուրի մասնագետի մոտ, սակայն այն երբեք չի համեմատվում, չի քննարկվում այդ խմբերի մոտ: Իսկ եթե համագործակցեն, իրենց փորձը և արդյունքները փոխանակեն, մշակեն արդյունավետ աշխատանքի այլ մոտեցումներ, երեխայի մոտ զարգացման դինամիկան կաճի:

Պետք է նշել, որ երեխաների կարիքները ՄՀԱԿ-ի կողմից գնահատվում են կրթության ստանալու առանձնահատկության տեսանկյունից, իսկ ցերեկային կենտրոնների կողմից կարիքի գնահատումը կատարվում է բազմակողմանի և երեխաների կարիքների գնահատման արդյունքում և միտված է անհատական կարողություններին և կարիքներին համապատասխան մշակել զարգացման անհատական ծրագրեր և տրամադրել համապատասխան ծառայություններ՝ հաշմանդամություն կամ հոգեֆիզիկական խանգարում ունեցող երեխաների և դեռահասների ակտիվությունը, մասնակցությունը և անկախ կյանքով ապրելու և համայնքային կյանքին ներառմանը նպաստելու համար: Սակայն ցերեկային կենտրոնները իրենց հերթին կարիքի գնահատումը իրականացնում են տարբեր գործիքների միջոցով և երեխան մի կենտրոնից մյուսը տեղափոխվելու պարագայում ստիպված պետք է լինի կարիքի գնահատումը անցնել մեկ այլ եղանակով և ծառայությունների ստանալ ոչ թե շարունակելով երեխայի հետ արդեն իսկ կատարված աշխատանքը այլ սկսելով մեկ այլ կետից հաշվի չառնելով գրանցված առաջընթացը:

Ցերեկային աջակցություն տրամադրող կառույցներում ինչպես երեխաները, նաև ծնողներ իրենց շատ լավ են զգում: Երեխաները հնարավորություն են ունենում զբաղվել իրենց սիրելի աշխատանքով, իսկ ծնողները, խորհրդատվություն ստանալուց բացի նաև հնարավորություն են ունենում ազատ ժամ գտնել, դուրս գալ կենտրոնից և զբաղվել առօրյա այլ գործերով: Սակայն խնդիրը նրանում է, որ երեխաներն ամեն օր չեն այցելում կենտրոններ, այլ շաբաթը 2- 3 անգամ, այն էլ կարճ ժամանակով:

Առաջարկություններ

- Լոռու մարզում ներառական կրթության կազմակերպումը պետք է համատեղ ուսուցումից անցում կատարի դեպի բոլորի համար հավասար հնարավորությունների ստեղծման միջոցով որակյալ կրթության մատուցմանը: Պետական լիազոր մարմինը պետք է վերանայի ՆԿ իրականացման կարգ՝ բացառելով տարբերակված որևէ մոտեցման կիրառումը դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս:
- Անհրաժեշտ է ոլորտը կարգավորող իրավական ակտերում կատարել փոփոխություն , որպեսի հնարավոր լինի ցուցաբերել ճկունություն և անձակենտրոն մոտեցում հնարավորություն ստեղծելով ԿԱՊԿՈՒ այն երեխաներին, որոնք ունեն վարքային խնդիրներ կամ հիպերակտիվություն 45 րոպեից պակաս ժամանակ մասնակցեն դասաժամին, իսկ մնացած ժամանակ ստանան տարաբնույթ հմտությունների ուսուցում և/կամ զարգացմանը ուղղված այլ ծառայություններ օրինակ. Լոգոպեդի , հատուկ մանկավարժի, հոգեբանի և էրգոթերապիստի աջակցություն:
- Առավելագույնս հստակեցնել այն ֆիզիկական և նյութատեխնիկական չափանիշները, որոնց պետք է համապատասխանի ՆԴ-ը: Անհրաժեշտ է վերանայել ԱՈՒՊ- ները և ամրագրել երեխայի առանձնահատուկ կրթական կարիքների գնահատման ռացիոնալ, երեխայի լավագույն շահից բխող ժամկետները:



- Դպրոցը պետք է սահմանի կարգ, որը կապահովի ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների պարտադիր մասնակցությունը անհատական ուսումնական պլանների (ԱՌԻՊ) մշակմանը և գնահատմանը:
- Հատուկ ուշադրության պետք է արժանանան առարկայական ուսուցիչները:
- Պետք է հնարավորություն ստեղծել ընդլայնելու ցերեկային արտադպրոցական ծառայություններ իրականացնող կենտրոնների գործունեությունը:
- Ցերեկային արտադպրոցական ծառայություններ իրականացնող կենտրոններում ավելացնել նեղ մասնագետների կողմից տրամադրվող ծառայությունները:
- Ցերեկային արտադպրոցական ծառայություններ իրականացնող կենտրոնները և Մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնները երեխաների կարիքի գնահատումը պետք է իրականացնեն միևնույն գործիքակազմով ապահովելով երեխայի կարիքների բազմակողմանի գնահատման ընդհանուր հասկանալի լեզու բոլորի համար:
- Մշտապես վերապատրաստումներ իրականացնել ՆԴ, ցերեկային կենտրոնների մասնագետների համար:
- Ուշադրության կենտրոնում պահել նաև 15 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող երեխաներին, մեխանիզմներ մշակել նրանց ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող կենտրոնների ծառայություններում ներգրավվելու և հաճախումներն ամենօրյա դարձնելու վերաբերյալ:
- Ուշադրության կենտրոնում պահել բարդ, ինքնասպասարկում չունեցող, տնային ուսուցում անցնող երեխաներին: Մեխանիզմներ մշակել, միջոցներ հայթայթել նրանց ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող կենտրոնների ծառայություններում ներգրավվելու համար:
- Ստեղծել ցանց բազմամասնագիտական թիմերի, մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատակիցների և ցերեկային արտադպրոցական ծառայություն տրամադրող կենտրոնների մասնագետների համար, փորձի փոխանակման, խորհրդատվության և տեղեկատվության փոխանցման համար:



ՀԱՐՑԱՇԱՐ

Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների շրջանում ֆոկլուս-խմբային քննարկման

Ողջույնի խոսք

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում՝ «Արգինա» մշակութային ՀԿ-ի և «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ-ների կոնսորցիումի՝ «Մենք լիիրավ անդամ ենք» ծրագրի պատվերով իրականացվում է մշտադիտարկում Լոռու մարզի 6 համայնքային աջակցության կենտրոններում:

Ծրագրի նպատակն է՝ ուսումնասիրել Լոռու մարզում գործող համայնքային աջակցության կենտրոնների գործունեությունը, վեր հանել հիմնախնդիրները և մշակել առաջարկություններ, ուշադրության կենտրոնում ունենալով այդ կենտրոնների՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիությունն ու հասցեականությունը: Խնդրում ենք ակտիվություն ցուցաբերել և անկաշկանդ մասնակցել քննարկմանը: Հիշեք, որ չկան ճիշտ ու սխալ պատասխաններ, և բոլոր դիտարկումները ողջունելի են: Այս քննարկման արդյունքում պատրաստվելու է առաջարկությունների փաթեթ, որտեղ ներառվելու են միայն քննարկման ամփոփ տվյալները, իհարկե չեն օգտագործվի անուններ և անձնական տվյալներ:

Ձեր թույլտվությամբ հանդիպումը կձայնագրենք, ինչը կօգնի մեզ հնչեցված գաղափարները և կարծիքները ճիշտ վերարտադրել և առաջարկներ պատրաստել: Իսկ եթե ձայնագրությունը ձեզ կխանգարի արտահայտվել, ապա կարող ենք ցանկացած պահի ընդհատել այն:

1. Եկեք ծանոթանանք: Խնդրեմ նաև ներկայացրեք, թե ո՞ր են այցելում Ձեր երեխաները, որտեղ են ստանում իրենց կրթությունը:
2. Ե՞րբ եք վերջին անգամ դիմել մանկավարժահոգեբանական կենտրոն, ի՞նչ նպատակով:
 - 2.1 Ո՞րն է եղել այդ կենտրոններում Ձեր գործողությունների հաջորդականությունը:
 - 2.2 Ինչպե՞ս է իրականացվել երեխայի գիտելիքների գնահատումը և ինչ հաջորդականությամբ:
 - 2.3 Ի՞նչ մասնագետներ են իրականացրել գնահատումը, ինչպե՞ս կգնահատեք այդ մասնագետների աշխատանքը:
3. Ինչպե՞ս են երեխաները ստանում իրենց կրթությունը, ո՞ր դասաժամերն են բաց թողնում և որո՞նց են հաճույքով մասնակցում:
 - 3.1 Ծանոթ եք անհատական ուսուցման պլանին, մասնակցե՞լ եք ԱՌԻՊ-ի կազմման գործընթացին:
 - 3.2 Դպրոցում երեխայի հետ լրացուցիչ ի՞նչ մասնագետներ են աշխատում:
4. Ձեր երեխան այցելու՞մ է որևէ ցերեկային կենտրոն:
 - 4.1 Ի՞նչ ծառայություններից է օգտվում այդ կենտրոններում:
 - 4.2 Ինչպե՞ս և կգնահատեք այդ կենտրոնների աշխատանքը և ի՞նչ կցանկանայիք, որ Ձեր երեխան այդ կենտրոններում հավելյալ ստանար:
5. Ինչպե՞ս է Ձեր երեխան ընդգրկվում ցերեկային կենտրոններում: 6. Ի՞նչ փոփոխություններ կանեիք Դուք այդ կենտրոններում:



ՀԱՐՑԱՇԱՐ

Փորձագիտական հարցազրույցների հարցաշար

Ողջույնի խոսք

1. Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում՝ «Արգինա» մշակութային ՀԿ-ի և «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ-ների կոնսորցիումի՝ «Մենք լիիրավ անդամ ենք» ծրագրի պատվերով՝ «Գլոբսիս» ՄՊԸ-ն իրականացվում է մշտադիտարկում Լոռու մարզի 6 համայնքային աջակցության կենտրոններում:
2. Ծրագրի նպատակն է՝ ուսումնասիրել Լոռու մարզում գործող համայնքային աջակցության կենտրոնների գործունեությունը, վեր հանել հիմնախնդիրները և մշակել առաջարկություններ, ուշադրության կենտրոնում ունենալով այդ կենտրոնների՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիությունն ու հասցեականությունը: Խնդրում ենք ակտիվություն ցուցաբերել և անկաշկանդ մասնակցել քննարկմանը: Հիշեք, որ չկան ճիշտ ու սխալ պատասխաններ, և բոլոր դիտարկումները ողջունելի են: Այս քննարկման արդյունքում պատրաստվելու է առաջարկությունների փաթեթ, որտեղ ներառվելու են միայն քննարկման ամփոփ տվյալները:
3. Տվյալ հարցազրույցի նպատակն է հավաքագրել փորձագիտական կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները ցերեկային կենտրոնների կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ: Չայնագրությունը կօգտագործվի հնչեցված գաղափարները և կարծիքները ճիշտ վերարտադրելու համար:
 1. Ինչպե՞ս կգնահատեք ներկայումս Հայաստանում ներառական կրթության վիճակը: Արդյո՞ք ունենք բավարար օրենսդրական կարգավորում: Արդյո՞ք առկա նյութական բազան, ֆինանսական և մարդկային ռեսուրսները ապահովում են ծառայությունների անհրաժեշտ որակը: Մասնավորապես, ինչպիսի՞ն է իրավիճակը ձեր համայնքի/մարզի նախադպրոցական և դպրոցական կրթության ոլորտում:
 2. Իսկ ինչպե՞ս կգնահատեք մանկավարժահոգեբանական կենտրոնների, այլ ցերեկային կենտրոնների վիճակը: Արդյո՞ք առկա նյութական բազան, ֆինանսական և մարդկային ռեսուրսները ապահովում են ծառայությունների անհրաժեշտ որակը:
 3. Կան արդյո՞ք որոշակի չափորոշիչներ կամ սահմանափակումներ՝ երեխաներին ցերեկային կենտրոն ընդունելու համար:
 4. Ի՞նչ մոտեցումներ են կիրառվում Ձեր կենտրոնում՝ երեխայի կրթական ու զարգացման անհատական կարիքները բացահայտելու և հասցեագրելու համար: Ի՞նչ խնդիրներ են առաջանում այս առնչությամբ և ինչպե՞ս են դրանք լուծվում:



5. Ըստ Ձեզ (մեթոդական



մասնագետների



համար), կրթության բովանդակության մեջ որքանո՞վ են ներառված հետևյալ բաղադրիչները՝

- շարժողական զարգացում,
 - մտածողություն և տրամաբանություն,
 - տարրական մաթեմատիկական պատկերացումներ և գիտելիքներ,
 - ուշադրություն և հիշողություն,
 - երևակայություն և ստեղծագործական մտածողություն,
 - կողմնորոշում տարածության և ժամանակի մեջ,
 - սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում,
 - բանավոր խոսք, հետաքրքրություն գրքերի նկատմամբ,
 - սոցիալական, հուզական, անձնային զարգացում,
 - ինքնասպասարկման, առողջության ու անվտանգության պահպանման հմտություններ,
 - սովորելու հանդեպ հետաքրքրասիրություն, նախաձեռնություն, մասնակցություն ուսումնական գործընթացին:
6. Ինչպիսի՞ն են Ձեր աշխատակիցների հարաբերությունները ծնողների հետ: Արդյո՞ք կազմակերպվում են հանդիպումներ ծնողների և մասնագետների մասնակցությամբ: Ծնողները մասնակցություն ցուցաբերո՞ւմ են կենտրոնի առօրյային, միջոցառումներին, ինչպես նաև խնդիրների լուծմանը:
7. Ինչպե՞ս են մասնագետները աջակցում այն երեխաներին, որոնց մոտ հայտնաբերվել են բարդ հոգեբանական, զարգացման խնդիրներ:
8. Ի՞նչ է անհրաժեշտ, որ կենտրոնները ապահովեն որակյալ ծառայություններ և ունենան երեխայի զարգացման անհրաժեշտ նախադրյալները: Եվ ի՞նչ է անհրաժեշտ փոխել օրենսդրական կարգավորման ոլորտում:



Ֆիզիկական մատչելիության դիտարկման քարտ

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում՝ «Արգինա» մշակութային ՀԿ-ի և «Միջհամայնքային համագործակցություն հանուն գյուղական համայնքների զարգացման» ՀԿ-ների կոնսորցիումի՝ «Մենք լիիրավ անդամ ենք» ծրագրի պատվերով՝ «Գլոբսիս» ՄՊԸ-ն իրականացվում է մշտադիտարկում Լոռու մարզի 6 համայնքային աջակցության կենտրոններում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Հաստատության անվանումը _____

2. Հասցե _____

3. Հաստատության հեռախոսահամար _____

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ

Ա. Փողոցը/ բակը

1. մայրեզր (բորոյուր)

կա չկա

2. թեքահարթակ

կա չկա առանց շեմի բռնաձողով ծածկով չկա

3. Դպրոցի մասին տեղեկատվական վահանակի տեսանելիություն (1-5 բալային սանդղակ, որտեղ՝ 1 – ընդհանրապես տեսանելի չէ, 5 – լիովին տեսանելի է)

1 2 3 4 5

4. Բրայլյան ցուցանակի առկայություն

Առկա է

Առկա չէ

5. Մուտքի դռան մոտ զանգի կոճակի առկայություն:

Առկա է

Առկա չէ

Հաստատության մուտք

1. աստիճաններ

կան

չկան

2. բռնաձող աստիճանների մոտ

կա չկա

3. թեքահարթակ

1) կա՝ բռնաձողով առանց բռնաձողի ծածկով

2) չկա, բայց հնարավոր է կառուցել

3) չկա և հնարավոր չէ կառուցել

4) այլ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՒՏՔԸ (լրացնել, եթե բացի հիմնական մուտքից կա այլ ավելի մատչելի մուտք)

Ա. Նկարագրությունը

1. այլընտրանքային մուտքի գտվելու վայրը

2. այլընտրանքային մուտքի նշանակությունը (կարելի է նշել մի քանի տարբերակ).

1) ծառայողական 3) բեռների համար

2) սայլակի համար 4) այլ (նշել) _____

3. այլընտրանքային մուտքի հասանելիության ընթացակարգը (միշտ բաց է, կամ բացվում է պահակի կողմից, ում թույլտվությամբ և այլն)

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՄՈՒՄ

Ա. Ընդհանուր նկարագրություն

1. հասարակական օգտագործման համար նախատեսված հարկերը (նկարագրել)

2. առանց թեքահարթակի աստիճաններ առաջին հարկի տարածքում, այցելուի համար նշանակություն ունեցող սենյակի մուտքի ճանապարհին (լրացնել, եթե առաջին հարկը նախատեսված է հասարակական օգտագործման համար)

1) կան _____ հատ,

2) չկան

3. այլ խոչընդոտներ առաջին հարկի տարածքում (նեղ միջանցք և այլն)

4. Մայլակով մարդու համար երթևեկելու հնարավորությունը (1-5 բալային սանդղակ, որտեղ՝ 1 – ընդհանրապես հնարավոր չէ, 5 – լիովին հնարավոր է)

1 2 3 4 5

5. խոչընդոտներ հասարակական օգտագործման համար նախատեսված մյուս հարկերի տարածքում _____

Բ. Վերելակի առկայություն (լրացնել, եթե մյուս հարկերը կարևորություն են ներկայացնում հաստատության գործառնության տեսանկյունից)

1. վերելակ

1) կա , 2) չկա

2. մինչև վերելակ առանց թեքահարթակի աստիճաններ առաջին հարկում

1) կան _____ հատ, 2) չկան

3. մինչև վերելակ առանց թեքահարթակի աստիճաններ մյուս հարկերում (եթե տարբեր հարկերում տարբեր քանակի են, նշել առավելագույն քանակը)

1) կան _____ հատ, 2) չկան

4. այլ



Գ. Սենյակներ (կամ սրահներ) և սանհանգույց

1. սենյակների դռների լայնությունը _____ սմ (եթե տարբեր է, նշել կարևորություն ներկայացնող սենյակներից ամենամեղ դռների լայնությունը: **Եթե դռները երկփեղկանի են և 2-րդ փեղկը բացվում է, նշել փեղկերի ընդհանուր լայնությունը**)
2. կա՞ արդյոք հասարակական սանհանգույց
1) կա 2) չկա
3. սանհանգույցի մատչելիությունը սայլակ օգտագործող անձանց համար
1) մատչելի է
2) մատչելի չէ (բացատրել) _____
4. այլ _____

Դ. Դռների բացվածքներից, սանդուղքներից, թեքահարթակներից առաջ նախազգուշացնող ակոսավոր կամ հակադրական գույներով ներկված մակերևույթ:

- 1) Առկա է
- 2) Առկա չէ

Դռների բացվածքներից առաջ	Սանդուղքներից առաջ	Թեքահարթակներից առաջ
Առկա է <input type="checkbox"/>	Առկա է <input type="checkbox"/>	Առկա է <input type="checkbox"/>
Առկա է <input type="checkbox"/>	Առկա է <input type="checkbox"/>	Առկա է <input type="checkbox"/>

ԱՅԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լրացրեցին (անուն, ազգանուն)

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____ Համայնք _____

Ընդունեց՝ _____

